


*Հայոց*  
Հրատ. Գևորգ Եւ Միրզաջան Միրզաբէղեանների

11102

ՌՈՒԻԲԷՆ ԿԱՅՁՈՒԻՆԻ

# ԲԱԶԵԻ ԵՐԱԶԼ



Հրատ. Գէորգ եւ Միրզաջան Միրզաբէգեան  
8793

աշտամ լուս

891.99  
4-19

173

ԹՈՒԲԵՆ ԿԱՅՁՈՒԵՒԻ

## ԲԱԶՔԻ ԵՐԱԶԼ

Центральная биб-ка им. Ленина  
гор. Баку

Инвентаризация 1936 г.

№

### БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА служит не одному, а многим.

Возвращайте книгу в  
срок, чтобы и другие  
могли воспользоваться

ею.

003

ԹԻՖԼԻՍ  
Տպարան Մ. Դ. Ռոտինեանցի  
Типографія М. Д. Ротиніанца.  
1897

2886

Дозволено цензурою. Тифлисъ, 25 Апрѣля  
1897 года.



1430

41

## ԲԱԶԵԻ ԵՐԱՋԸ

Հարաւային թուչունների հալրենիքը, որ ընկած է Արարատ սարի ստորոտում, մի ժամանակ խարխափում էր թանձր մժութեան մէջ:

Իիւրաւոր հրոսակների գէմ մաքառելով, զանազան անկոչ տէրերի ձեռքից խլելով, թուչուններն իրանց հալրենիքի վերջին փառքը — իշխանական գահը դարերէ ի վեր պահեցին անպարտ և հասցրին այն օրուան, երբ բովանդակ աշխարհին տիրեց ընդհանուր խաղաղութիւն ու ամենուրեք լուսաւորութեան պայծառ ճաճանչներ:

Սակայն այդ ճաճանչները երկար ժամանակ անձանօթ մնացին հեռաւոր հա-

րաւի խորքում ապրող թռչուններին։ Եւ չնայած, որ նրանց նախնիքը հին ժամանակներում երամներով Գանգէսի ու Նեղոսի ափերն էին հասնում. այնտեղ թնդացնում իրանց քաղցր երգերը և ամենքին գեղեցիկ գաղափար տալիս իրանց Հայրենիքի մտսին, չնայած, որ ոմանք էլ զանազան երգեր երգեհոններ, մեղեդիներ ու համերգներ սովորելու համար մերթ Հելենացւոց աշխարհն էին շտապում, մերթ Ապենինի չքնաղ ստորոտները սլանում, սակայն նորերը տակաւին զուրկ էին մնացել ամեն ինչից և խարխավուած մթութեան քօղի տակ շըջաշըջապատել էին իշխանի ապարանքը ամենայն օր ճիգ թափելով իրանց որկրամոլութիւնը յագեցնել։ Իւրաքանչիւրը նրանցից ստոր միտումներով աշխատում էր իւր փետուրները զարդարել և իւր փորը կշտացնել։

Յանդզնութիւնը այն կէտին էր հասել, որ բուերը, ագռաւները մինչև իսկ կաչաղակները ժպրհում էին երտել իշ-

խանական գահ, արքայական ծիրանի թագ ու գալիսոն։

Իսկ մթապատ հարաւում, ալեբեկ Արարատի ստորոտում, ժայռերի վերալ, մացառների ու տատասկների արանքներում, չէ որ բսնում աճում էին և փարթամ վարդեր և հեզ մանուշակներ և համեստ լասմիկներ։

Եւ ալդպէս մի օր, երբ իշխանական գահին բազմում էր Սիրամարգ իշխանը. ապարանքում մի նորսութիւն իրարանցում էր ձգել բոլոր թռչունների մէջ։

Հաւաքուել էին սարեակները, ագռաւները, կաչաղակներն ու անգղերը և միմիանց հետ զարմացմամբ խօսում մի երիտասարդ Բաղէի մասին, որ նոր էր վերադարձել հիւսիսից և նոր երգերի, մեղեդիների ու ոգեշունչ երգեհոնների ալնքան մեծ պաշար ունէր, որի նմանը ժամանակներից ի վեր հարաւում և ոչ մէկը չէր ունեցել։

Բազէն եկել էր Սիրամարգի մօտ որ և է պաշտօն ստանձնելու և ընդմիշտ

այնտեղ ծառալելու համար։ Եւ ահա այդ առթիւ անգղերից մէկը մի օր մտաւ Բազեի մօտ՝ նրան աւելի լաւ ճանաչելու և նրա դիտաւորութիւնը հիմնովին իմանալու։

—Ախր, ինչը ստիպեց քեզ, Բազե եղբայր, գալ այստեղ ծառալել. չէ որ այստեղ ասպարէզ չկայ, չէ որ ձեր պաշարն այնքան մէծ է, որ մեզ մօտ ոչ ոք չէ կարող ըստ արժանույն գնահատել ձեզ և վերջապէս չէ որ Սիրամարգ իշխանի օրոք այս ապարանքի գործերն այլ տեսակ են ընթանում։

—Յարգելի Անգղ, ասաց Բազէն իւր պանծալի գլուխը շարժելով և աչքերի դիւթիչ հայեացքը Անգղի վերայ ձգելով՝ զիտես, որ ես չեմ եկել այստեղ ինձ համար փառք որոնելու. դիտես, որ համատամ ուտելիք, շքեղ փետուրներ. փառթամ բոյներ և զանազան յարգանքներ ինձ չեն գրաւել այստեղ։ Ոյն, այս վայրը ալժմ փշոտ է, տատասկոտ, սակայն ինձ համար սուրբ է և նուիրական, վասն զի

այստեղ եմ թողել մանկութեանս օրօրոցը, այստեղ եմ թողել օրօրոցիս նարօտը, այստեղ առաջին անգամ տրտասանել իմ «կա կան», ալս երկնքի տակ մատաղ օրերս անց կացրել, այս օդի մէջ սաւառնել, այս խաւարից եմ դուրս եկել, ուստի և սրտագին պարտք համարեցի գալ, նուիրուել այս խաւարապատ ժայռերին, այս պատանապատ աշխարհին, այս սառոծ քարերին։

Այն, եկել եմ այստեղ երգել, այստեղ գործել, այստեղ ուրախանալ, այստեղ տիրել, այստեղ հրճուել և այստեղ լալ ու արտասուել։

Անգղը մնացել էր տոլշած նա հայեացքը սկեռած Բազէի երեսին լուռ լըսում էր նրա խօսքերը։

—Հա, շարունակեց Բազէն, բայց ասա խնդրեմ, ինչ տեսակ են ընթանում գործերն ապարանքում։

—Գործերը, խօսեց Անգղը, գործերը գուցէ շատ լաւ ընթանալին, եթէ չինէր Սիրամարգի գլխաւոր խորհրդատուն։

— Ո՞վ է նրա խորհրդատուն։  
— Նորա խորհրդատուն Կտցահարն է։  
Աստուած իմ, բացականչեց զարմա-  
ցած Բագէն և շարունակեց, միթէ Սիրա-  
մարդը հաւատ է ընծալում Կտցահարին։  
Այո՛, և այդ պատճառով մեր բոլոր  
գործերը զեկավարւում են անձնական հա-  
շիւներով. նայեցէք և տեսէք թէ Ագ-  
ռաւն ալդտեղ ինչ պատիւ ունի. ինչու  
որովհետեւ Կտցահարի համար ամսական  
մի լէշ է բերում. պակաս յարգանք չու-  
նի և Կաչաղակը որովհետեւ նա էլ Կրտ-  
ցահարի հօրեղբօր աղջկայ տագրն է։  
Սարեակն էլ անցեալ օրը պատուանք-  
շան ստացաւ. ալդ էլ այդ պատճառով,  
որ նրա շնորհիւ Կտցահարի բոյնը ամէն  
բարիքով լցուել է։ Նայեցէք Ծիծեռնակ-  
ները, Սոխակներն ու Արտոյտները այն-  
քան զուրկ են պատուից, որ ոչ մի ան-  
գամ նրանք չեն երևում այստեղ և այդ  
բոլորը նրա համար. որ հեզ են բարի և  
համեստ։ Զէ, սիրելի Բագէ, ձեր այստեղ

գալը, այստեղ պաշտօն ստանձնելը, որ-  
քան վտանգաւոր է, նոյնքան և ցաւալի։  
— Ես մինչև անգամ այդպիսի դրու-  
թիւնն իսկ աչքի առնելով, անպատճառ  
պէտք է այստեղ պաշտօն ստանձնեմ.  
վասն զի գործել կտմեցողը պէտք է հենց  
այնտեղ նետուի, ուր ամէն կողմից կա-  
րօտ կըլինի լոյսի, մոալի մաքրութեան  
և անդորրութեան։ Սլո, ես պիտի այս-  
տեղ պաշտօն ստանձնեմ, ես աչքի առաջ  
ունիմ և վիշտ և տանջանք և տառա-  
պանք, սակայն ես լենւում եմ իմ լոյսե-  
րին, վստահանում համեստ ոյժերիս, հա-  
ւատայով, որ մի օր տենչերիս պսակը  
կառնեմ։

Ասաց Բագէն և սլացաւ գէպի Սի-  
րամարդ իշխանի ապարանքը։

Հետեւեալ օրը թուչունների ընդհա-  
նուր խօսակցութեան նիւթը Բագէն էր։  
Ամէնքն էլ խօսում էին նրա նոր պաշ-  
տօնի մասին։ Թէպէտ և լսել էին, որ

Բազէն հիւսիսից նախ քան այդտեղ գալը, հեռու Ելբուսի սահմաններում մի մեծ գետի ափին ապաստանած բազմաթիւ թռչունների համար հիմնել էր մի ահագին բոլն, ուր նորաբոյս թռչունները ժողովում էին զանազան երգեր, ու մեղեղիներ սովորելու, թէպէտ նա իւր ահագին պաշարով մի թանկագին գիւտ է բովանդակ հարաւի թռչունների համար. սակայն այդ օրը նրան տեսնելով նոր պաշտօնի սարասում, համեստ, հեղաբարոյ պաշտօնեալի ոքեմում, առանձին իմն հրճուանք ու գարմանք էին արտայալտում:

Նոյն օրը գոռոզ Կտցահարը կանչեց Բազէին ասաց. գիտես ես ով եմ:

— Գիտեմ դու կտցահարն ես:

— Ո՛չ, այդպէս չէ, դու տակաւին երիտասարդ ես. դու դեռ ոչինչ չգիտես, բայց պէտք է իմանաս, որ ես այստեղ երկրորդ իշխանն եմ, հասկացնք:

— Ո՛չ, ես չեմ կամենում հասկանալ, պատասխանեց անվեհեր Բազէն և

աւելացրեց. պէտքէ դու ևս հասկանաս, որ ես մի երկրում ընդունում եմ մի իշխանի ոչ թէ երկու:

Բայց մեր հարաւի թռչունների համար այդպէս չէ, խօսեց Կտցահարը կեսայուղուած ձախով. մեզ մօտ Սիրամարդը իշխան է միայն դահլիճում գահի վերայ, իսկ ես դրսում գործերի մէջ, լաւ պիտի իմանաս որ առանց ինձ ոչինչ չես կարող անել:

— Եթէ սրբութիւնը այդ աստիճանն ըռնադատուած է, եթէ գարեւոր պահպանուած իրաւունքները ալդպէս ոտքի տակ էք տուել, իմացէք որ ձեզ ոչ միայն չեմ խոնարհուիլ, այլ որքան ոյժերս ներեն յանուն արդարութեան, յանուն ազգացին շահերի, յանուն իշխանի, միշտ դէմ կըդնամ ձեզ. եթէ մինչև իսկ և ընկճուիմ, չեմ դաւաճտնիլ իմ նուժիրական սկզբունքներին. ասաց Բազէն և մի արհամարհական հայեցք ձգելով նրա վերայ հետայրացած նրանից:

Այնուշետե Կտցահարի թելադրու-

թեամբ խաւարասէրները, նենզմիտները, սորորաքարշները որքան հնար գործ դրին Բազէն վնասելու, հարուածելու, չկարողացան, վասն զի սիրոյ երգերի շտեմարան Բազէն անշիցանելի տենչերով վառւած, մութն ու խաւարը ճեղքելով, լեռներ ու ձորեր անցնելով, թնդացնում էր իւր ոգեշունչ մեղեդիները, արթնացնում մաշող նիրհին մատնուած սրտեր, խօսում աղբիւրների ու առուակների, ծաղիկների և ծառերի հետ, խստերի ու թփերի հետ և ամէնքին նոր կեանք, նոր խինդ, նոր բերկրութիւն սուլում։ Հալածանքներից բնաւ չէր վհատում։ Սրտում բորբոքուող տենչերը գրոհ էին տալիս դէպի առաջ, գրոհ դէպի լոյս, դէպի կեանք։

Երբեմն բարձրանում էր Բազէն հարաւային լեռների սառած կատարները, այնտեղից դիտում իւր հալրենիքին պատած մութ ու նսեմ պատկերները, սուլզում էր մտքերի մէջ՝ մտքով սաւառնում դէպի հեռաւոր անցեալները, առօտ ու անազօտ պատկերներ բերում աչ-

քի առաջ, ցնորքների հատորներ կազմում և յանկարծ հառաչում, տիտանեան գլուխը թափահարում, արտասունքի տաք կաթիւները գլորում հալրենի սառած քարերին և վիրապատ սրտից դուրս ցայտով հառաչները նուիրում հալրենեաց հովերին, Ի՞նչ էր որոնում, ինչ էր մտածում, ինչեր էին նրա տենչերի առարկաները, ինչեր նրա ցնորքները.... Հալրենիքը խաւարով պատած, հալրենակիցների սըրտերը տակաւին սառած, շուրջը մեռելալին լուսւթիւն։ Լոյս էր շշնջում, լուկարօտում, լոյս փափագում և դրա համար անվեհեր սրտով նետում իրա տանջանքների և տառապանքների բովը։

Սլացաւ, թռաւ ամէն անկիւն, երգեց և անվախ պատմեց ամէնքին իւր իդձերը, տենչերը իւր կարօտն ու փափագը։ Իւր դիւթիչ երգով՝ Բազէն կրակի նման մի նոր սիրով ճարակում էր բոլորի սիրտը։ Եւ նա՛ իբրև ներգործող երգող և երգով թմրած սիրտ արթնացնող ու

պտղաբեր գործն, առաջ տանող ամբողչ  
հարաւում միակն էր:

Մի օր Բազէն մտածեց Հայրենի  
հովիտներից ծաղիկներ հիւսել, իւրաքան-  
չւր փնջի մէջ իւր սրտի իղձերը զետե-  
ղել և մէկ մէկ ուղարկել աշխարհասփ-  
իւռ Հայրենակիցներին: Եւ այդ նոր մըտ-  
քով ուրախացած, գիշեր ու ցերեկ տո-  
կաց դրա համար, ծրագիր կազմեց և  
դիմեց իրագործելուն:

Զնալած որ անվերջ չարչարանք ու-  
տանջանք կրեց. այնուամենախիւ այդ  
միտքն էլ պսակեց:—Հիւսեց փնջերը և  
նրանց ընդհանուր անունով կնքեց «Հա-  
րաւային թոշումնների աշխարհ»:

Այդպիսով նրա հռչակի ծաւալը մե-  
ծացաւ, անցաւ հարաւի բոլոր անկիւն-  
ները: Հանդէս եկան զանազան թռչուն-  
ներ, գովեցին, փառաբանեցին այդ գոր-  
ծը և ընկած Բազէի ետևից, հետևեցին  
նրա երգերին ու մեղեդիներին և դրան-  
ցից շատերը իրանք էլ սկսեցին իւրային-

ներին օգնող և այդ մտքերը նրանց մէջ  
տարածող հանդիսանալ:

Մարգու համար մեծ գործը միշտ  
մեծ թշնամի է առաջ բերում: Բազէն որ-  
քան մեծ եռանդով աշխատում էր, որ-  
քան մեծ ջանքերով մաքառում էր Հայ-  
րենիքին տիրող խաւարի դէմ և որքան  
փալուն գործեր էր հանդէս հանում  
նոյնքան և մեծացնում էր իւր ոսոխների  
թիւր, շատացնում իւր առաջ բացուող  
փոսերը:

Ոհա մի առապար հարթում է, սա-  
կայն նրա ծայրին տնթիւ ոստայներ և  
անվերջ թակարդներ է տեսնում: Բայց  
իղձերով զեղուած սիրտը ինչից կարող  
էր վհատել. — նա տակաւին շարունա-  
կում էր իւր ուղին՝ յենուած յոյսերին  
և վառուած մի վեհ հաւատով: Նա ան-  
բաժան իւր հոգւոյ անմեկին գաղտնիք-  
ներից, առաջ էր քշում իւր նաւը կեան-  
քի ահուն փոթորիկների դէմ մըցելով:

Մի օր Բազէն մտածեց մատաղ  
թռչունների համար ևս առանձին ծա-

զիկների փնջեր հիւսել։ Որքան այդ նոր քաղը գարմացրեց թռչուններին, որքան էլ նրանք թերահաւատ էին դէպ այդ մտադրութիւնը, այնուամենայնիւ եռանդով վառուած Բազէն այդ ևս իրագործեց։ Հազարերանդ ծաղիկներից հիւսեց բուրաւէտ փնջեր և անուանեց նրանց «Մատաղ թռչունների փունջ»։

Բազէի այդ հրատապ գործունէութեան միջոցին՝ մի օր Սիրամարգ իշխանը մտածեց այն ապարանքին կից, ուր ժողովում էին նորափետուր թռչունները զանազան երգեր սովորելու, շնել մի այլ ապարանք, ուր այդ մատաղ թռչունները կարողանան գիշերուայ իրանց հանգիստն առնել։

Այս անգամ Սիրամարգ իշխանը շատ լաւ համկացաւ, որ իւր այդ մտադրութիւնն իրագործելու համար Կացահարի նման խաբեբաները, Սարեակի նման թեթևողիկները կամ ագուաւի պէս անպիտանները ոչ մի կերպ, ոչ մի դէպքում չեն կարող իրան օգնական հանգիստանալ

և միակ արժանին նա համարեց Բազէին, կանչեց իւր մօտ և գործակից դարձրաւ իրան։

Հայրենիքի սիրահար, գործերին հըմուտ և տիրօջ հնազանդ Բազէն գնաց Սիրամարգի մօտ, յանձն առաւ նորապատուէրը և նետուեց հայրենիքի խորքերը։

— Թնդացրեց իւր կենսաբեր ձայնը, շարժեց հայրենակիցների սրտերը, ժողովեց ամէնքի տուած օգնութիւնը և կարճ ժամանակում պսակելով Սիրամարգի յոյսերը ի կատար ածեց նրա դիտաւորութիւնը։

Ցաւ ի սիրտ այդ ապարանքում Բազէն չմնաց, վասն զի որքան էլ Սիրամարգը բարի էր նրա վերաբերմամբ, այնուամենայնիւ Բազէն չէր մնալ, մինչդեռ Սիրամարգը իւր մօտ տակաւին պահում էր Կացահարին և այլ բազմաթիւ թռչունների։

Այս անգամ ևս հայրենիքի սիրով տողորուած Բազէն բարձրացաւ լեռների



գլուխը, նայեց չորս կողմը, մուժ ու  
մռայլ ամպերի նման պատկերներ բե-  
րաւ աչքի առաջ, լուռ արտասուեց, թո-  
ղեց Սիրամարգի ապարանքը և ոլացաւ  
դէպի իւր հեռաւոր հայրենակիցները:  
Սրտի խոցերը ծածկեց կրծքի տակ և մի  
նոր եռանդով շարունակեց իւր պտղա-  
բեր գործունէութիւնը.—շինեց բազմա-  
թիւ բոյներ, ժողովեց փոքրիկ թռչնակ-  
ներ և կամաց կամաց ամէնքին սովորա-  
ցրեց իւր իմացած երգերից ու մեղեդի-  
ներից:

Եւ այդպէս նա մտաւ ամէն անկիւն  
և ամենուրեք շնչեց նոր կեանք, նոր  
խինդ ու բերկրանք:—Նա լաւ հասկա-  
նում էր, որ աշխատաւորի վաստակը  
քրտինքն ու արցունքն է, փուշն ու  
տատասկը: Նա գիտէր, որ իւր հայրե-  
նակիցները տակաւին խարխափուելով՝ խա-  
ւարի մէջ, չեն կարող լոյսով վառուա-  
ծին սիրել: Եւ նա ապրում էր լոկ այն  
լոյսով թէ՝ ինչպէս գիշերուան ցերեկ է  
յաջորդում նոյնպէս և խաւարին լոյս:

Նա հաւատում էր այդ խաւարի ան-  
ցնելուն և լուսի ծագելուն. նա հաւա-  
տում էր, որ մի օր իւր ցրած սերմերից  
ծաղիկների փունջեր պիտ վայելէ և պը-  
տուղների կողովներ պիտ ստանայ, և  
այդ օրուան սպասելով, նա հանդուր-  
ժում էր իրան հասցրած բոլոր նեղու-  
թիւններին: Նա այդ խաւարամիտներին  
նայում էր ներողամիտ աչքով, ընդունե-  
լով, որ նրանց գոյութեան ժամանակա-  
միջոցը կարճ է:

Ինչպէս ամբարտաւանի գոյութիւնն  
է երերուն, նոյնպէս և խաւարապաշտի  
և ինչպէս անզօրի արիւն ծծող զօրեղը  
մի օր պիտի թաւալուի անարդ արեան  
մէջ, նոյնպէս փծուն խաւարասէրը մի  
օր պիտի հեծէ լոյսի ճաճանչների տակ:

Այդպիսի մտքերով ոգեսորուած Բա-  
զէն անվհատ շարունակեց իւր ուղին,  
մինչդեռ Սիրամարգ իշխանը մեռաւ և  
նրա ապարանքում տիրեց սարսափելի  
վէճ ու աղմուկ: Երեան եկան գանազան  
անկարգութիւններ, որոնց բոլորի պատ-

ճառը գտնուեց Կտցահարի մէջ։ Իսկոյն  
թափուեցին նորա վերայ, վետուրները  
հանեցին, լաւէտ նշաւակի առարկայ շի-  
նելով, արտաքսեցին այդտեղից։ Մեծ իրա-  
րանքում ընկաւ զանազան թուչունների  
մէջ։ Ամէն մէկը կամեցաւ իշխան լինել  
և ամէն մէկն էլ այդ նպատակին հաս-  
նելու, գիմեց զանազան ստոր միջոցների։

— Ս.լդ միջոցին հեռու հիւսիսում  
ապրում էր մի ծերունի Արեղաձագ, ո-  
րին բովանդակ թուչուններն ատում էին,  
սակայն որն իւր կողմն էր քաշել ապա-  
րանքում ապրող բոլոր աբեղաձագերին  
և ագռաւներին։ Ուստի, չնայած որ թըռ-  
չունների ցանկութիւնն էր իշխանի գա-  
հի վերալ տեսնել կամ չքնաղ հիւզոն-  
դիոնի ծիծեռնակին, որ իւր վեհու-  
թետմբ գրաւել էր համայն հարաւի  
թուչունների սիրտը և կամ հարաւի մի  
տնկիւնում ապրող Արծուին, որ նոյն-  
պէս մեծ հռչակ էր վայելում իւր հա-  
մասփիւռ հալըենակիցների մէջ։ Սա-  
կայն աղետաբեր հանգամանքները աջո-

դութիւնը հասցըին հակակրելի Արեղա-  
ձագին։

Բազէն այդ ժամանակ ոչ մի պայ-  
քարի մէջ մտնելով շարունակում էր իւր  
գործը, մինչև աբեղաձագը երկար կոփւ-  
ներից ու աղմուկներից լետոյ իշխան  
դարձաւ, և նրա համար մի նոր կար-  
գագութիւն արաւ։

— Նա Բազէին նշանակեց հարաւի  
թուչունների լնդհանուր ներկայացուցիչ  
հիւսիսի խորքում գտնուող այն երկրում,  
ուր ապրում էր այլ թուչունների մի մեծ  
իշխան և ուր գտանւում էին աշխարհիս  
երեսին գոյութիւն ունեցող բոլոր թըռ-  
չունների ներկայացուցիչները։

— Ս.լսեղ Բազէն շարունակեց իւր  
գործունէութիւնը և իւր բարի հռչա-  
կին աւելի մեծ ծաւալ տուաւ և այն ոչ  
միայն իւրալինների մէջ, այլ և շատ  
ուրիշների մօտ։

Սակայն ամէն գաշտում՝ ծաղիկների  
հետ աճում է և վայրի բանջար։ — Ս.լդ-  
տեղ հարաւից եկած մի քանի անդղեր

սկսեցին գաղտնի ոստայներ սարքել Բա-  
զէի դէմ և ուղիղ այն ժամանակ, երբ  
Արեղածագը շրջապատել էր իրան՝ զա-  
նազան լպիրը թռչուններով, որոնց մէջ  
աւելի աչքի էր ընկնում նոր պաշտօն  
ստացած մի ագուաւ, որից գարշում էր  
ամէն մի բարեմիտ թռչուն և որի տը-  
գեղ արտաքինն իսկ զազիր տպաւորու-  
թիւն է թողնում տեսնողի վերայ: Թըռ-  
չունները նրա արտաքինի համաձայն  
«չեչոտ» մականունն էին տուել նրան:  
Եւ թէպէտ նա ևս եղել է հիւսիսում,  
նա ևս այդտեղ լսել է շատ երգեր ու  
երգեհոներ, բայց իւր փտած ուղեղով և  
ստոր ու նենգ հոգւով տակաւին խա-  
ւարի ջերմ սիրահար է մնացել, բայց  
կատարելագործուած վարպետ էր պէս-  
պէս ինտրիգների և խարեբալութիւննե-  
րի: — Այդ զզուելի ագուաւը նախ քան  
Արեղածագ իշխանի ապարանքում պաշ-  
տօն ստանձնելը, Սիրամարդ իշխանի և  
Բազէի ջանքերով հիմնուած ապարան-  
քում Արեղածագի շնորհիւ վարում էր

ընդհանուր կառավարչի պաշտօն: Այդ-  
տեղ նա թողել է այնպիսի մի տխուր  
հռչակ, որ այլ ևս մի կերպ չի կարող  
այն վարագուրել:

— Ա. Հա մի կողմից այդպիսի գար-  
շակ արարածները. միւս կողմից հիւսի-  
սում ապլող հարաւի Անգղերը այնքան  
դրգեցին Արեղածագ իշխանին, որ սա  
հրաման ուղարկեց Բազէին, թողնել այդ-  
տեղ, հեռանալ դէպի Զաթիր-դադ լերան  
ստորոտը և ապաստանել այն սուրբ վայ-  
րում, ուր ընկած է մի համեստ ապա-  
րանք, շրջապատուած բնութեան հա-  
մայն սքանչելիքներով:

Խեղճ Բազէ: — Թախիծը նորից պա-  
տեց նրան: Եւ որքան հիւսիսում ապ-  
քող պատանի թռչունները համբուրում  
էին նրա թևերը, սփոփում — սիրտ էին  
տալիս նրան, նա տակաւին մնում էր  
անմիտար. վասն զի տենչավառ սիրտը  
ոչ մի վշտով այնքան չէ մաշւում, որ-  
քան զրկուելով աղմկալի կեանքից և աք-  
սորուելով մի ամայի վայրում:

Բազէն որ կեանք էր կոչում, որ  
իբրև լուսաւորութեան ախոյեան անյոդ-  
դողդ կուրծքը դէմ էր տալիս կեանքի  
ամենադառնաղէտ հօսանքներին, որ ու-  
զում էր իւր սիրած հայրենակիցների  
մէջ ասլրել, գործել նրանց համար, սի-  
րել միշտ նրանց ու սիրուել նրանցով.  
մխիթարել ու մխիթարուիլ, կռուիլ ու  
հաշտուիլ, ալժմ սրտաբեկ ձայնով հրա-  
ժեշտ է երգում.—հրաժեշտ կեանքի ա-  
լեկոծ ծովին, հրաժեշտ իւր ձայնին կա-  
րոտող բիւրաւոր հայրենակիցներին և  
անարդ ազուաւների ու անգղերի շնոր-  
հիւ գնում է մի վայր, ուր թէպէտ  
սուրբ է և իւր անունը կրում է ամե-  
նամեծ չարչարանքը կրողի անունով,  
սակայն որի գռները փակ են և կապ  
գործունէութեան առաջ:

Բազէն միայնակ հայեացքն յառեց  
ջինջ երկնքին զջնջաց. «Թող լինի քո կամ-  
քը»: Նայեց շուրջը և չմխիթարուած, մի-  
այն լուռ արտասուքի կաթիլները գլո-  
րեց գետնին—կաթիլներ, որ թափում

էին սրտին ընկած կապարից: Իսկ երկին-  
քը լուռ էր, երկիրն անխօս, բնութիւնն  
անտարբեր:

Զկայ այն երկրում մխիթարութիւն,  
որի իշխանաւորը չունի իւր հաստատ  
կամքը, իւր որոշ կարգադրութիւնը և  
որ գոնէ չէ լուռ իւր խղճի ձայնին այլ  
այդ խիղճն իսկ խաղալիք է դարձնում  
իւր խաբելայ արբանեակների ձեռքում:

Զէր կարող մխիթարուել և Բազէն  
որ նրա իշխանաւորը գործում է այն շաւ-  
դում, որ ցոյց են տալիս նրա նենդամիտ  
ստորագրեալները, և որ ցաւ ի սիրտ ինքն  
էլ տգիտաբար ծախում էր իւր սիրտը և  
նրանց ընծալում:

Եւ տիպուր տրտում Բազէն հեռա-  
ցաւ դէպի այդ վայրը դէպի կուսատիպ  
Չաթիր-դաղի ստորոտը:

«Ողջոյն ձեզ մենաւոր աւերակներ.  
սըբազան գերեզմաններ, լռակաց պա-  
րիսալներ, հարաւի թռչունների թշուա-  
ռութեան բազմադարեան վկաներ, ձեր  
անունն կարդալով բազկատարած ինդրում

եմ ամենամեծ չարչարանքը կրողի օգնութիւն։ Այս երգելով նա մտաւ այդ հինաւուրց վալը։

Մի օր, թախծալի մենաւորութեան մէջ, այդ օտար երկնքի տակ, թաւ ծառերի արանքում առանձնացած լալիս էր Քաղէն և երբեմն ինքն իրեն խօսում։ — քեզ համար եմ շնչում, քեզ համար ապրում, իմ անբախտ հայրենիք, քո սիրով տանջում, քո կարօտով հեծեծում, քո տխուր պատկերի առաջ սիրոս ու հոգիս մաշում։

Սակայն ոչ վիշտ, ոչ թախիծ, ոչ տառապանք ու տրհաւիրք ինձ չեն անջատում այն լոյսերից, որ տածում եմ դէպի քո նորաբոյս զաւակները, որոնք մի օր պիտի գան պիտի պատռեն քո կուրծքը. այնտեղից հանեն քո սիրով. զերմութիւն տան և կենդանացնեն քեզ։ Ես հաւատում եմ, որ խոպան վալը բրդ մի օր պիտի ժպտան, որ ամալի ան-

պատներդ զմբուխտավառ մարմանդ պիտի դառնան, ձմբան կապանքների մատնուած աղբիւրներդ պիտի գչգչան, մարդարիտ թաւալեն չորցած հոգտի ու անտառի ծարաւ յագեցնեն։ Ես հաւատում եմ, որ այս չարերի օրը կանցնի և դու կըցնծաս քո կենդանացած սքանչելիքներով և արդ ես եկել եմ, եկել եմ կենակցել Զաթիր-դաղի ծառերի ու ծաղիկների հետ, կամ մեկուսանալ համատարած բնութեան մի անկիւնում ու մխիթարուել լոկ ցնորքներով. — թող սոսխներն ու բախանան, թող սինլքորները հրճուին, բայց ինձ փոլթ չէ, վասն զի եկել եմ ես նորից քո գիրկը դառնալու յուսով, զի՞ գիտեմ որ մի օր կընկճուի չար Բատլը և ամէն մի անմխիթարը կը մխիթարուի իւրաքանչիւր վարագուրուած արդարութիւն վառուած չահերով հանդէս կգայ այն ժամանակ ես մի նոր ձիթենիով կը գամ պէսպի քեզ, իմ անձկալի, իմ նուիրական հայրենիք։ Եւ հոգեմաշ մենաւորութիւնը գուցէ Բաղէին սրտաճաք ա-

նէին. սակալն գեղատեսիլ Զաթիր-դադի  
պատկերները դեռ պահում պահպանում  
էին հայրենիքի սիրով տոգորուած սիրտը:

Եռանդոտ սիրտը մի անլուռ աղբեւր  
է, որ նեղ խողովակի մէջ էլ գչգչում է:

Բազէն այդ հեռաւոր և ամալի ան-  
կիւնում ևս չը լուեց և բացի այն որ ան-  
խոնջ տոկունութեամբ շքեղացբեց ու  
պալծառացրեց իրան յանձնած այդ նոր  
բոյնը, նա չզլացաւ իւր ոգեշունչ երգե-  
րը այդտեղից ևս ուղարկել իւր ձայնին  
կարօտ ազգակիցներին: Նա իւր հին նախ-  
նիների պատմութիւնը քաղցրալի փնջե-  
րով հիւսեց և հասցրեց նրանց յետնորդ-  
ներին: Բայց որքան էլ նա աշխատում էր  
այնու ամենալին առ հայրենիքն ունե-  
ցած կարօտը տանջում էր նրան: Օրերն  
անցնում էին և նա տակաւին մնում էր  
այդ մաշող մենաւորութեան մէջ,

Մի օր տիսուր, տրտում, ծառի շուա-  
քում փոքրիկ ժայռի ծերպին կանգնած  
սուզուել էր խորին մտքերի մէջ և երե-  
ակալութեամբ անցել հայրենիքի հեռա-

ոոր անկիւնները: Ապա հայեացքն առաւ  
երկնքին և դարձաւ թափառող ամպերին  
ու երգեց.

Հայրենեաց սիրով սիրտս տոչորուած,  
Ո՞չ, ձեզ եմ դիմում տարագիր ամպեր.  
Արդեօք տեսելէք թախիծով պատած  
Սնբաղդ հարաւի սիզաւէտ դաշտեր:

Ս.ուել էք համբոյլք վճիտ ջրերից,  
Կամ գուրզուրել էք լերանց գագաթներ.  
Սէդ Արարատի սառած լանջերից  
Բերել էք խեղճիս բարի պատգամներ:

Եւ կամ թափել էք կաթիլք արտաս-  
ուաց,  
Հեղիկ վարդերի վառուած սրտերին.  
Լսէլ էք մըմունջ, հառաչ տիրամած,  
Պատմել էք բոլոր լուկ եթերին:

Ամպեր, խօսեցէք, տուէք պատասխան,  
Կապարէ ընկած կրծքին իմ մաշուած,  
Մենաւոր կեանքս միթէ յաւիտեան  
Թունալից բովում կանցնի սեացած:

Տեսչերի ծով է սիրու կրակուած,  
Ես կեանք եմ ուզում, գործել ու  
տանջուել:  
Ապրել, յագենալ սիրով հայրենեաց,  
Եւ ապա նորա հէգ կըծքին մեռնել:

---

Աղբիւրն էր իւր կարկաշիւնով նը-  
րան խրախուսում, ուռենին իւր շրջիւ-  
նով. դալար մարմանտը հեզիկ սիւզե-  
րով: Ալդ միջոցին մի Տատրակ թռաւ  
դէպի նա և հաղորդեց մի նոր լուր, ո-  
րով Բագէն մնաց ապշած:

Չիմացաւ ինչ խօսէր. տիսրութիւնն  
ու ուրախութիւնը միաժամանակ ծփա-  
ծին նրա սրտի խորքերում:

Տատրակը յայտնեց, որ Արեղաձագ  
իշխանը մեռաւ և ապարանքն ընկաւ  
ամենախայտառակ դրութեան մէջ: Կե-  
ղեքումները, աւերումները, գուքերը պա-  
տառների հասցնելը. ողբալի դրութեան  
մէջ են ձգել այդ նուիրական ապարանքը:

Լաց եղաւ Բագէն, տրտասուեց և  
դառնագին ողբաց հայրենի տունը, հայ-

րենեաց փառքը, հայրենիքի վերջին բե-  
կորները: Նայեց երկնքին հնչեցը իւր  
թախծալի մեղեդին և վշտահալուած ան-  
ցաւ մաշող մտքերի խորքերը: — Ինչ ա-  
նել. ինչով օգնել, բնչ ճանապարհով  
հասնել ալդտեղ, պահել պապահպանել  
ալդ բոլորը: Հնար չկար. չկար և ոչ  
մի ուղի:

Նա մնաց դարձեալ տրտում իւր  
դառնագին մտքերի խորքերում:

---

Արեղաձագ իշխանի մահից լետոյ  
թռչունները միահամուռ ձայնով իշխան  
ընտրեցին երբեմն հարաւի մի խորքում  
ապրող մեծահոչակ Արծուին: Ալդ ժա-  
մանակ նա ապրում էր սրբազն աղաւ-  
նիի ամենասուրբ երկրում: Այնտեղ ուր  
ամէն օր ամէնքը շնչում են Յորդանա-  
նի և Լիբանանի հովերը, Գեթսեմանի  
զեփիւռները, ուր միշտ աչք են դարձ-  
նում Սիօնի երկնքին և աղօթք մըլ-

մըմջում համաշխարհային թռչունների  
ամենասուրբ վալրում:

Դղբդաց ամբողջ հարաւը. աւետեաց  
ձայները հնչուեցին ամէն անկիւն և ու-  
րախութեամբ ու բերկութեամբ զեղուեց  
իւրաքանչիւր սիրո:

Լսեց և Բագէն. լսեց և ուրախա-  
ցաւ. սակայն մի ուրախութիւն, որի  
նկարագրելը գրչի ուժերից վեր է: Բեր-  
կրութիւնն ու ցնծութիւնը ծփածին նրա  
սրտի թելերին և այս անգամ ևս հայ-  
եացքն առաւ երկնքին և հնչեցրեց մի  
այնպիսի օրհներգ, որ արձագանք տուո-  
ղը հրեշտակներ կարող էին միայն:

Նա այլ ևս չհամբերեց, թռաւ դէ-  
պի մեծ ծովի ափը և անհամբեր սպա-  
սեց կենսաբեր Արծուին:

Մեծամեծ հանդէսներով, ուրախու-  
թեան ու ցնծութեան յուղիչ երգերով,  
հարաւի թռչուններն Արծուին բերին  
դէպ իւր տպարանքը:

Բագէն, որ նրան սպասում էր ծո-  
վի ափին՝ տեսնելուն պէս նետուեց գիրկը:

Բագէ, կոչեց Արծիւը. — Բագէ, իմ  
սիրելի, իմ կարօտամաշ եղբալը, թող  
այդ արտասուքը, որ թերես ուրախու-  
թեան է արտասուք, լինի վերջինը:

Կաց Բագէ: Ես անմխիթարս եկել  
եմ անմխիթարներին մխիթարելու, դու  
այսուհետեւ ինձ հետ կը լինիս, իսկ ես  
քեզ հետ:

Այս սրտաշորժ տեսարանը շարժեց  
բոլոր թռչունների սիրտը. սակայն սևե-  
րես ագուաւը, բուն, և մի քանի անգղեր  
քմծիծաղ տուին իրանց մտքերում և  
իրար կամաց շշնչացին. սպասենք և տես-  
նենք, թէ այդ ջերմ եղբայրասիրու-  
թիւնը որքան պիտի տեէ:

Արծուի ջերմ և սրտագին ցանկու-  
թեամբ Բագէն դարձաւ իւր առաջին  
խորհրդականը և իւր բոլոր գործերի  
ընդհանուր ղեկավարը:

Բայց վարդի թփի տակ թագնուած  
օձի և ծաղիկների արտնքում ոստան  
հիւսող սարդի նման թռչունները, ոչ մի  
օր, ոչ մի կերպ հանդիստ ու դադար

չառան և հանգիստ ու դադար էլ չը  
տուին Արծուին:

Արծիւը գեռ անկողդողդ հանդուր-  
ժում էր այդ բոլորին և իւր վեհ հոգ-  
ւոյ համաձայն տակաւին շարունակում  
էր Բազէին պահել իւր մօտ: Եւ նրա  
անձնուէր ծառալութիւնները, քրտնա-  
ջան աշխատանքը, անկեղծ ու սրտե-  
ռանդ վարմունքը այնքան գրաւեցին  
Արծուի սիրտը, որ այդ բոլորով կաշա-  
ռուած, նա Բազէին հասցրաւ մի շատ  
բարձր աստիճանի:

Բազէի այդ աստիճանն ստացած օրը  
նրա հետ նոյնպիսի աստիճան ստացան  
և այլ երեք թուշուններ. սակայն որոնց  
չափակուեց վայելել ընդհանուր թըռ-  
չունների այնպիսի մեծ համակրանք և  
այնպիսի անհուն բերկութիւն, որպի-  
սին վայելեց Բազէն և որոնց պերճ ա-  
պացուցը կարող են լինել նրա համար  
ուղիղ չորս հարիւր տեղից ուղարկուած  
անհամար զնորհաւորութիւնները:  
Եւ այդ առթիւ ոչ ոք այնքան չէր

մտատանջուում, չէր տապակւում իւր փե-  
տուրների տակ, որքան չեչոտ ագուաւը:  
Իւր մի շարք լպիրշ մանկլաւիկներով  
նետուում էր աջ, նետուում էր ձախ, ալս  
և միւսին խնդրում, մէկին կաշառում,  
երրորդին զանազան խոստումներ տալիս  
և մինչև վերջին ոյժը ճիգ թափում մի  
հնար գանելու Բազէին հեռացնելու և  
նրա պաշտօնն իւր ձեռն առնելու:

Այս պարզ է, որ ագուաւը Սիրա-  
մարգի փետուր ծածկելով Սիրամարգ չէ  
կարող լինել. բայց ալս էլ պարզ է, որ  
ալդպիսի խաբեբաները շատ անգամ հաս-  
նում են նպատակի. ևս առաւել այն  
ժամանակ, երբ իրանց նախանձը վա-  
ռուած է այնպիսի անձանց դէմ, որոնք  
վերին աստիճանի մեծահոգի են, բարի  
և ներողամիտ:

Եւ այնինչ չեչոտ ագուաւը այդ-  
քան լախուուն քալերի էր գիմում, մե-  
ծահոգի Բազէն ծիծաղում էր նրա վե-  
րայ և անմոռունչ շարունակում իւր պըտ-  
դաբեր գործը:

Բայց, ցաւ ի սիրտ, ազնուասիրտ  
Բազէն այսպէս միամտաբար խաբուեց  
և զոհ գնաց Արծիւ իշխանի սլարդասըր-  
տութեան:

Ծայրահեղ բարի, առաքինի և չա-  
րութիւնից զզուած իշխանը, չարութիւնն  
առելի չփառելու համար, ստիպուեց—  
միան ակամայից և դառն հանդամանք-  
ներից ստիպուեց հեռացնել Բազէին և առ-  
նել իւր մօտ այդ զզուելի, թունաւոր օձ—  
չէչոտ ագուալին:

Տիրութիւնը համակեց բոլոր ազ-  
նիւ թուներին:

Բազէն ճչաց, կանչեց, թռաւ վեր—  
դէպի լուռ երկինք, թռաւ աջ դէպ ալե-  
գարդ լեռներ և չկարողացաւ միտթա-  
րուել, չկարողացաւ՝ զի բաժանւում է  
նրանից, որին այնքան սիրում էր, որին  
նուիրել էր իրան հոգւով և մարմնով և  
որն այսօր մնում է աւազակների և խա-  
բեբաների ձեռքին: Լաց եղան բոլոր  
թուները:

Արտասուեց և Արծիւը:—Բայց ին-

չո՞ւ.—Բազէից անջատուելու, թէ լան-  
կարծ աւազակների ձեռքն ընկնելու  
համար:

Մտաւ Բազէն Արծուի մօտ, թա-  
փեց արտասուքը և ասաց. ինչո՞ւ, ինչո՞ւ  
ես անջատում ինձ քեզանից: Նրա հա-  
մար, որ այսքան սիրեցի քեզ. թէ նրա  
համար, որ գիշեր ցերեկ աշխատեցի քեզ  
համար, թէ նրա համար, որ աւազակ-  
ների թակարդները քանդելով և ինձ ամ-  
բողջովին քեզ նուիրելով, պահեցի պահ-  
պանեցի այն բոլորը ինչ որ ինձ էիր  
լանձնել: Միթէ չե՞ս սառսում այդ ա-  
ւազակներից, միթէ չգիտե՞ս, որ գըանց  
հետ ապրողը այնպիսի խայտառակ վերջ  
ունի, ինչպիսին որ ունեցաւ Աբեղաձագ  
իշխանը:

Գիտեմ, գիտեմ, ասաց հառաչելով  
Արծիւը. գիտեմ, որ կործանող են, բայց  
թէ ինչպէս ինձ շրջապատեցին ինքս էլ  
չգիտեմ. շուարած եմ, սիրելի Բազէ, հտ-  
ւատա, որ ինքս էլ չգիտեմ: Դու երբ  
հեռանաս այստեղից, աղօթիր ինձ հա-

մար, Հանապազ աղօթիր, որ դառն փորձանքներից ես հեշտութեամբ փրկուիմ։ Գնա և Հաւատա, որ իմ սիրտն ու հոգին միշտ քեզ ուղեկից է, որ քո անունը ցմահ իմ լիշողութեան մէջ պիտի լինի։ Ապա սրտաշարժ ողջագուրանքով նրանք բաժանուեցին իրարից։

Սրտտսուաթոր տչքերով Բագէն մի գիւթիչ հայեացք ձգեց ալեզարդ Արծուին, դուրս եկաւ, նայեց ալերեկ Արարատին, շարժեց գլուխը, հովերի հետ իւր հրաժեշտի ողջոյնը մի դառ հառաչով հանդերձ ուղարկեց նրան, ապա սաւառնեց կապոյտ եթերի տակ և նետուեց դէպի հեռուն։ Անցաւ ծով, ցամաք և հասաւ հարաւի այն թուչուններին, որոնք ապաստանել էին հիւսիսի մալր—գետի բերանի մօտ։ Հնչեց ալդտեղ իւր երգերը, հնչեց իւր քաղցր մեղեղիները, շարժեց թմրածներին, արթնացրեց նիրհածներին և հիմնեց ալդտեղ մի ահագին բոյն, որ պակաս չէր իշխանի ապարանքի մօտ շինած բոյնից։

Մի բոյն, ուր զանազան երգեր սովորելու համար պիտի շտապեն հարաւը բոլոր թուչունների ձագերը։ Ապա զանազան գեղեցիկ կարգադրութիւններ անելով այդ երկրում, խաւար անկիւններում լուսաւորութեան բազմաթիւ ճրագրում լուսաւորութեան բազմաթիւ ճրագրում վառելով, սլացաւ կրկին դէպի Զաներ վառելով, սլացաւ կրկին դէպի Զաթիր-Դաղի ստորոտները, գգուեց իւր գուլը գուլը ծառերն ու թփերը, իւր փալ-փալած աղբիւրներն ու առուակները և մնաց դարձեալ նրանց մօտ նրանցով միսիթարուելիս։

Մի անգամ արծիւը զանազան երկիրներ այցելելով, այցելեց և այն վալրն, ուր ասպրում էր Բագէն. բայց ցաւ ի սիրտ այդ ժամանակ Բագէն ալդտեղ չէր։ Նա ևս թռել էր իւր հրավառ երգերով տխուր սրտերը ոգեսորելու։ Մտաւ Արծիւը նրա բոյնը. տեսաւ ամէն ինչ նորոգուած, մոռացութեան մատնուած շատ իրեր նոր փալրով հանդէս եկած, ամէն անկիւն իսպառ գեղեցկացած։ լիշեց Բա-

զէին, արտասուքի ոլոռն-ոլոռն կաթիւ-  
ները լոիկ գլորեց գետնին:

Ինչու, ինչու արտասուեց:

Եես ևեալ օրը թո չունները ժողո-  
վել էին մի ընդարձակ բոյնում և ուրախ  
վայելում էին զանազան կուտեր: Յան-  
կարծ ամէնքն էլ ցնցուեցին, երբ լուր  
առան, որ միւս բնից, ուր միայնակ ճառ-  
շում էր Արծիւ իշխանը, ներս է մտնում  
ինքը. ամէնքը ուզդուեցին, տեղերը խո-  
նարհ կանգնեցին և խորին ակնածու-  
թեամբ սպասեցին նրան: Ներս մտաւ  
ծերունի իշխանը: Խոհերը խաղում էին  
նրա ալեծուփ դէմքին: Նա մի մեծ կաթ-  
թանկագին ջուր առաւ և խօսեց այս-  
պէս. մինչզեռ դուք ուտում էիք, խը-  
մում և ուրախանում, ես դիտում էի  
իմ շուրջը և ամէն ինչ դիտելով, հոգ-  
ւով և սրտով սլանում դէպի իմ սիրելի  
Բագէն: Դէպի նա, որ իւր անխոնչ տո-  
կունութեամբ, իւր քրտնաթոր աշխա-  
տանքով և իրան յատուկ եռանդով այս-  
պէս զարդարել պայծառացրել է այս

վալը. այսպէս շքեղացրել և հոգի ներ-  
շնչել ամենուրեք: Նրանից առաջ այս-  
տեղ շատերն են եղել և ոչինչ չեն ա-  
րել. իւկ Բագէն, լուսամիտ, պերճ և  
անխոնչ Բագէն, այս մեռելութեան մատ-  
նուած վալը երին նորից կենդանութիւն,  
նոր կեանք ու հոգի է տուել. այլև գի-  
շեր ցերեկ տոկացել է իւր նախնեաց.  
Կեանքի պատմութիւնը հասցը ել իւր հե-  
ռաւտոր հալը ենակիցներին: Արդ՝ ես ա-  
ռաջարկում եմ խմել նորա կենացը:  
Ա. Հագին բոյնը դզրդաց անվերջ կեցցե-  
ներով և շատերն շտապեցին իրանց ու-  
րախութիւնն իսկոյն յատնել Բագէին:  
Խսկ աշխարհահոչակ Դեղձանիկը մի ա-  
ռանձին հրճուանքով այդ լուրը հալոր-  
դեց նրան: Զէչոտ ագռաւն էր միայն,  
որ պապանձուեց և տապակուեց իւր կեդ-  
տոտ թեերի տակ:

Ինչ և իցէ, բարեմիտ թո չունները  
ալդտեղ ևս համկացան, որ Արծիւը սըր-  
տով Բագէի հետ է և որ նրանց սիրով  
կապերը ժանգոտում են չէչոտ ագռաւի

պէս լպիրշները զանագան խարդախութիւններով:

---

Մի օր արևը պատրաստւում էր իւր անդրանիկ ողջոյնը տալ քնաթաթախ աշխարհին: Չաթիր-Դաղի կատարները ուկեզօծուել էին նրա վառուած ճաճանչների տակ, իսկ ծառերը իրանց ներդաշնակ շրջիւնով, ծաղիկները՝ քաղցր սլոցով զեփիւնների միջոցաւ հեզիկ բարեներ էին ուղարկում նրան:

Բնութեան այդ օրհներգին միացել էին աղբիւրներն իրանց թովիչ կարկաչով. առուակներն անուշ խոխոշով:

Բազէն տակաւին նիրհում էր և այդ ժամանակ սաւառնում մի քաղցր երազում:

— Նո տեսնում էր նոյն առաւօտը, բայց վեհապանձ Արարատի ստորոտում և արևի ճառագայթները ոսկով պճնել էին այդ ծերունագարդ լեռան: Տեսնում էր ամբողջ բնութիւնը անհուն հըբ-

ճուանքի մէջ: Ամէն տեղ ուրախութեան և ցնծութեան ողջոյներ: Տեսնում էր իւր մտերիմ բարեկամներին և բոլոր ազնուասիրտ թուչուններին շողշողուն փետուրներով ծածկուած ուրախ-ուրախ խօսում-թուչուում են իրար՝ հետ: Իշխանի ապարանքի վերև վառուամ էր մի հազարերանգ ծիածան, իսկ ներսը ճուած էր անհամար աստղերով. ամէն անկիւն պճնուած ազամանդով ու ոսկով: Ապարանքի մէջ տեղ փալլուն աթոռի վերայ բազմած էր Արծիւ իշխանը զարդարուած սպիտակափառ զգեստներով: Նրա աջ կողմում պերճափառ զգեստի տակ, ամենաբարձր աստիճանի հասած կանգնած էր Բազէն: Ամէն մի թուչուն մօտենում էր նրանց, գլուխ խոնարհում և խորին ակնածութեամբ հեռանում և կանգնում նրանց ետեւում: Ամէնքից յետոյ մօտենում է չէչոտ ագուաւը մթապատ գէմքով, գզզուած փետուրներով, չոքում Արծուի և Բազէի առաջ և իւր հլութեան և խորին անձնուիրութեան

Հաւաստիքը յայտնում։ Սակայն այդ ժամանակ լսում է Արծուի բարկացած ձայնը և բարկութեան ցասումը, որ թափում էր այդ սինլքոր ագռավի գլխին։

Դու ևս այստեղ, ասում էր նա, դու խարեբայ արարած, ոտնատակ արիր ամեն մի սրբութիւն, պղծեցիր այն բոլորը ինչ-որ նուիրական էր հարաւի ընդհանուր թուչունների համար։ Ամեն խարդախութիւն գործ դրիր միայն քո և քո ստորաքարշ մանկական ների ովսանն առաջ տանելու։ Բայց ոչ, արդարութեան ձայնը այլ ևս գրուանի տակ չէ մնում և դու քո ստոր համամիտներով հանդերձ ոչ միայն իմ ներողութեան էք արժանի, այլ թէ դուք այլ ևս չպիտի երեաք ոչ այս վայրերում, ոչ իմ աչքին և ոչ մի փոքր ի շատէ մաքուր հիմնարկութեանց մէջ։ Դուք մի տիզմ էք, ցեխի մի կուտ, որ ոչ մի ջրով լուանալու հնար չկալ։ Կորիր և գնա ճգնուիրայն հարիւրաւոր փոսերի մէկի մէջ, ու-

րոնք դու փորել ես տզնիւ հայրենակից-ներիդ համար։

Ագռաւն այնպէս էր դողում, որ հազիւ էր կարողանում շնչել։ Նա մի քալ հեռացաւ Արծուից, ընկաւ Բազէի ոտքերն ու ճչաց։ Ներիր ինձ և փրկիր։

Ներողը վերև, փրկողը ներքև, իսկ ես քեզ չեմ ուզում ճանաչել. այսպէս պատասխանեց նրան Բազէն և հայեացքը դարձրեց այն անհամար թուչուններին, որ ակնապիշ կանգնած նայում էին այդ բոլորին։

Ապա Բազէն դուրս է գալիս ապարանքից և թուչունները ձիթենիների և արմաւենիների ճիւղից ծաղիկներ էին փուռմ նրա ոտքերի տակ։ Ապշած, զարմացած այս տեսարաններով՝ Բազէն բարձրանում է դէպի փերուզագոյն եթեր, սաւառնում ջինջ օդի մէջ և այդ միջոցին լանկարծ զարթնում ու իմանում, որ այդ բոլորը երազ է։

Զգում է, որ շնչում է Զարթիր-Դա-

զի օդը, սիւգերի հետ առնում նրա ողջոյնը:

Սաստիկ տիրում է, մինչդեռ ջերմ կարօտը և փափագը սաստիկ տանջում էին նրան: Կարօտում էր ալդպիսի անոյշ քնից արթնանալով Արարատի ողջոյնն առնէր, նրա հովերը շնչէր, իւր հայեացքը դէպի նա դարձնէր. տեսնէր նրան և մխիթարուէր նրա անձկալի պատկերով:

Այդ օրից քիչ ժամանակ չանչած՝ նրա երազը կարծես կամաց կամաց սկըսեց իրագործուիլ:

Բազէն յանկարծ մի հրաւէր է ստանում Արծուից և իսկոյն ուրախ ուրախ սլանում դէպի նա:

Արծիւ իշխանը, որ սրտով միշտ նրա հետ է և հաւատում է նրա գործերի պսակման, այս անգամ կանչեց նրան և նախ յալտնեց, որ լուսաւոր արևմուտքում ապրող հարաւի թուչունները, որոնք յալտնի են իբրև լուսամիտ ընդարձակ հասկացողութեանց տէր, մի

քանի անգամ խորին աղերսանքով խընդրել են իրան, որ Բազէին ուղարկէ այնտեղ և նշանակէ նրանց համար իբրև ընդհանուր ներկայացուցիչ և իբրև ոգեշունչ մեղեղիների երգիչ:

Այդ երկրի թուչունները ի միջի ալլոց յալտնել էին, որ իրան համար ամբողջ հարաւում չկայ և ոչ մի արժանի թուչուն բացի Բազէից, ուստի և ջերմ փափագով խնդրել էին, որ նրան ուղարկէ իրանց մօտ. սակայն Արծիւը Բազէին ուղարկեց դէպի կապոյտ ծովի ափերը, ուր ապրում էին հարաւի անթիւ թուչուններ. պատուիրեց նրան հիմնել այնտեղ մի մեծ ապարանք և ժողովել այնտեղ թուչունների ձագերը, ուսուցանելու նրանց նոյն սրտեռանդ երգերն ու երգեհոնները, որոնք նա սովորացրել է շատ և շատ տեղերում:

Այսպիսի մի ծանը գործ Բազէն միայն կարող էր իրագործել և գործի սիրահար, հալրենակիցներին ամբողջովին նուիրուած Բազէն իւր տիրօջ ալդ պա-

տուէրն առաւ ու սլացաւ դէպ այդ երկիրը:

Հասնելով Կապոյտ ծովի ափերը,  
Բազէն շնորհիւ իւր կրակոտ երգերի,  
իւր անսահման եռանդի և գործելու  
հմտութեան, ամենակարճ ապագայում  
այդ ապարանքի համար ժողովեց մի այն-  
պիսի միջոց, որի նմանը երբէք լսուած  
չէր ամբողջ հարաւում, մի միջոց, որ  
մինչև իսկ հարաւի իշխաններից և ոչ  
մէկն էլ չէ կարողացել ձեռք ըերել,  
վերջապէս մի միջոց, որով նոյն իսկ այդ  
երկիրի թուչունները զարմանում էին,  
Հրաշք էին համարում և ամեն տեղից  
համբուրում, լիզում էին հագէի թևե-  
րը: Ահա այդպիսի մի հրաշալի միջոցով  
նա հիմք դրեց և իրագործման դիմեց  
մի ապարանքի, որի նմանը ամբողջ հա-  
րաւը չունէր: Եւ մինչդեռ հրատապ սի-  
րով, գիշեր ցերեկ տոկալով այդ գործի  
պատման համար էր աշխատում. յան-  
կարծ դղրդաց կապոյտ ծովն իւր ափե-  
րով, ցնցուեց, արձանացաւ Բազէն երբ այդ

միջոցին հրաման ստացաւ Ալծուից,  
թողնել այդ երկիրը և գարձեալ հեռա-  
նալ դէպի Զաթիր-Դաղ:

Իւր իշխանի հրամանին խոնարհ,  
Հնազանդ Բազէն ոչինչ չխօսեց, մտաւ  
թուչունների ընդհանուր ժողովատեղին  
և երգեց իւր հրաժեշտի վերջին մեղե-  
դին: Սգով ու ողբով դղրդացին ամեն  
անկիւն: Արտասուքով ոռոգում էին թըռ-  
չունները Բազէի ուղին, երբ դուրս ե-  
կաւ ժողովատեղից և դիմեց դէպ իւր  
բոյնը. այնտեղ ևս ժողովեցին ըոլոր  
թուչունները և իրանց ողբերով, իրանց  
սրտաբեկ երգերով մերթ միսիթարում  
էին նրան, փարւում նրա թևերով և  
սփոփանք ու միսիթարանք շշնջում նր-  
ան: Ողբում էին մեծերը, ողբում էին  
փոքրերը, ողբում և ամեն գասակարգի  
պատկանող թուչուններ:

Մի գնար, կաց, կաց, միսիթարիք  
մեզ, կոչում էին ամեն կողմից և անմը-  
խիթար արտասուքով սրսկում նրա շուր-  
ջը: Իսկ Բազէն՝ էլ ձայն, էլ մեղեդի չէր

գտնում, որպէս զի իւր սրտում բորբոքուող իզձերը կարողանար այնպէս թափել նրանց առաջ, ինչպէս ինքն էր կամենում։ Լալիս էր, երբեմն տխուր երգում և ամենքի սրտում վառուած կրակը աւելի բորբոքում։

Հասաւ անջատման ժամը։ Բազէն շրջապատուած անհամար թռչուններով՝ հասաւ այն հանգրուանին, որտեղից պիտի դիմէր դէպ իւր իշխանի բնակավայրը։

Ալգտեղ նրա հրաժեշտ տուող թռչուններին թիւ ու համար չկար։ Նրան տեսնելուն պէս օդը դզրդաց անվերջ կեցցէներով, անհամար սրտերից բղխած աղեկէզ հառաջներով ու ողբերի սրտամաշ ձախներով։ Թափուեցին նրա վերայ ամեն տեղից, համբուրեցին թևերը, թաթախեցին արտասուքով և արտասուելով երգեցին իրանց վերջին սրտալոյզ հրաժեշտը։

Բազէն հազիւ արտասուքը զսպելով իւր վերջին «մնաս բարեւ» երգեց և առաջ որոտնդոստ կեցցէների, անվերջ ա-

դաղակների արանքով հեռացաւ նրանցից, տանելով իւր հետ ամենքի սիրտը և ամենքի սէրը, տանելով իւր սրտում և այն կրակը, որ բորբոքուած է համայն հարաւի թռչունների սիրով և վառուած բոլորի համար գործելու տենչերով ու իզձերով։

Ես գիտեմ, որ Բազէն մի օր մեծ փառքի պիտի հասնի, աստց այդ գէպքից յետով Ծիծեռնակը Արտոյտին։ Եթէ այդ խօսքն առաջին անգամ դու արտասանեցիր, ոն ուրեմն, անպատճառ այդպէս պիտի լինի և ճիշտ է։ Նա՛ ով ապրում է իւր հալրենիքի և հալրենակիցների համար, նա առանց յաւերժական փառք թողնելու չի մեռնում։ Արդ՝ թողապրէ Բազէն և շատացնէ իւր նմանների թիւը, որպէսզի խոպան երկիրը շունչ առնէ, ծլէ, ծաղկէ և պտուղ տալ, ասաց Արտոյտը, հալեացքն առաւ եթերին և շնչաց սրտի ալգպիսի բիւրաւոր իզձեր։

Ես էլ քեզ հետ երկնքին նոյնն եմ

61102

— 52 —

աղաջում, Արտօյտ եղբայր. թող Աս-  
տուած խղճա մեր անբախտ հայրենիքին  
և ազատէ զանազան «չէչոտ» ազուաւնե-  
րից, ներքին ու արտաքին թշնամինե-  
րից: Եւ իսկապէս թող ապրէ Բագէն մեզ  
համար՝ շատ բազէներ պատրաստելու,  
աւելացրեց Ծիծեռնակը. Հնչեցրեց իւր  
թովիչ մեղեդին, թռաւ դէպի երկինք,  
ապա սլացաւ դէպի հարաւի խորքերը  
նոյն իղձը, նոյն մաղթանքը ամենքի  
ժօտ կըկնելու համար:



2013

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

ՎԱՃԱՐԻՈՒՄ ԵՆ

ԹԻՓԼԻՋ՝ ՅԱՎՀԱՆ. ՏԵՐ Սարդսեանի  
մազագինում և «Արաբատ» պրավաճառա-  
նոցում:

Բազու՛ հրատարակչի մօտ՝ Եղի՛. Փիլի-  
սոսեանների գործարանում և ոյ. Դա-  
րեզին թաւմաննեանի մօտ:

Մուսկուս՝ Եղի՛. Կորտապետ և Մը-  
կրտիչ Գոզոգեանների առևտրակ. տանը: